ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Մհեր Մկրտչյան 5բ, հեռ.՝ (+374 10) 54 56 37, ֆաքս (+374 10) 54 39 85
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«26» 08 2013թ.
No ԱՀ-1455

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
հասարակակիան կազմակերպության տնօրենին
(հասցե ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ)

Ի պատասխան Ձեր 2013 թվականի օգոստոսի 20-ի թիվ 206-ի 9 գրության՝ հայտնում եմ, որ Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) չունի առանձնացված «Պարգևատրման ֆոնդ», իր աշխատակիցներին պարգևատրում է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով և «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված դեպքերում, ժամկետներում և կարգով:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ Ձեր կողմից հայցվող տեղեկատվությունը, համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի, 133-րդ, 134-րդ, 136-րդ և 199-րդ հոդվածների, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի, 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, չի կարող տրամադրվել, քանի որ կարող է վնաս հասցնել Հանձնաժողովի աշխատակիցների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ երաշխավորված իրավունքներին և օրինական շահերին: Ընդ որում Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 199-րդ հոդվածում հստակ նշված է, որ աշխատողի աշխատավարձի և աշխատանքի այլ պայմանների վերաբերյալ տվյալները տրամադրվում կամ հրապարակվում են միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում կամ աշխատողի համաձայնությամբ: Հանձնաժողովի որևէ աշխատողի համաձայնության կամ Հայաստանի Հանրապետության

օրենսդրությամբ նախատեսված որևէ հիմք Ձեր կողմից ներկայացված գրության մեջ մատնանշված չի եղել:

Ինչ վերաբերում է պարգևատրումների մասին տեղեկությունները ըստ հաստիքների՝ ոչ անվանական տրամադրելու վերաբերյալ Ձեր առաջարկին, ապա դա ևս կհանդիսանա աշխատողների անձնական տվյալների հրապարակում, քանի որ Հանձնաժողովի նման փոքրաթիվ աշխատակազմ ունեցող մարմնի պարագայում համապատասխան հաստիքները զբաղեցնող անձանց վերաբերյալ տեղեկատվություն ստանալը որևէ մեկի համար մեծ դժվարություն չի առաջացնի:

Ա. Շաբոյան

Իրավաբանական վարչություն, 56-27-78